ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՐԱ ԱԼՈՅԵԱՆԻ «ՀԱՄԱՆՈՒԱԳ ՅԱՒԻ ԵՒ ՅԱՐՈՒԹԵԱՆ» ՊՈԷՄԸ

Դժուար է ժամանակային նոյն ծիրում ապրել հերոսի հետ,
տեսանել նրան ժամանակների հեռուից
եւ հերոսացնել քո եւ յարագնայ ժամանակներում:

Ա. ԱԼՈՅԵԱՆ

Մուտք

Պատմական կարեւոր իրադարձությունները միշտ էլ յետոյ դարձել են գեղարուեստական գրականության նիւթ՝ անկախ նրանից, թէ դրանք ինչ աւարտ են ունեցել։ Այդպէս էր Աւարայրի ճակատամարտից յետոյ, այդպէս էր 1915 թուականից յետոյ, այդպէս էր Հայրենական մեծ պատերազմից յետոյ, եւ, ըստ օրինաչափության, այդպէս պիտի լինէր, նաեւ Արցախեան հերոսամարտից յետոյ, առաւել եւս, որ այն պսակուել էր յաղթանակով։

Արցախեան հերոսամարտի յաղթանակի տարիները համընկան Հայաստանի Հանրապետության անկախության առաջին տարիներին։ Սակայն ծանր սոցիալական պայմանները, յուսախաբ արած քաղաքական գործիչները, մեծ մասշտաբներով արտագաղթը ինչ-որ չափով արգելակեցին Արցախեան հերոսամարտի թեման, եւ այն, ինչ ակնկալւում էր այս թեմայի առնչությամբ, գեղարուեստական գրականության մէջ չեղաւ։

Երիտասարդ բանաստեղծ Դաւիթ Ասատրեանը այս կերպ է բացատրում այդ երեւոյթը. «Երբ ինչ որ դժբախտութիւն է լինում, մարդ սկզբնական շրջանում խելագարության վիճակում է։ Երբ կարողանայ դուրս գալ այդ խելագար վիճակից, մարսի այդ դժբախտութիւնը, նոր կարող է անդրադառնալ այդ իրադարձությանը»[1]։ Այնուամենայնիւ, այս տարիների վերաբերեալ, թէեւ ոչ այն ծաւալներով եւ այն ցնծությամբ, որ սպասւում էր, գրականութիւն ստեղծուեց։ Սակայն ստեղծուած գրականութիւնն էլ չեղաւ այն փառաբանականը, որ ակնկալւում է յաղթանակներից յետոյ։ Գրական դաշտն էլ մի տեսակ լցուեց տարատեսակ ասելիքով, երբեմն անպատեհ ու ժամանակավրէպ, երբեմն ապագային տրուելիք երկիմաստությամբ։

Արա Ալոյեանի «Համանուագ ցաւի եւ յարության» պոէմը գրուել է Արցախեան հերոսամարտի յաղթանակից յետոյ, 1996 թուականին, սակայն գրքի տեսքով հանրությանը հրամցուեց 17 տարի յետոյ միայն եւ եկաւ լրացնելու այն բացը, որ գոյացել էր Արցախեան հերոսամարտից յետոյ, գեղարուեստական գրականության մէջ։

Պոէմը նուիրուած է Արցախեան պատերազմի հերոս Էտուարտ Պողոսեանին (Մգոյին), սակայն պոէմն իր բովանդակային շերտում աւելի համընդգրկուն է եւ արտացոլում է ամբողջ հայ ժողովրդի պայքարը իր հոգեկերտուածքի, էության եւ ազգային արժանապատության պահպանման համար։ Հեղինակը պոէմը գրել է ընդամէնը տասնհինգ տարեկան հասակում։ Նա, աչքի առաջ ունենալով հայրենակցի՝ վարդենիս-

ցի ազատամարտիկ, աւագ ընկեր Էտուարտ Պողոսեանի օրինակը, ամբողջացրել է իր բոլոր պատկերացումները Արցախեան հերոսամարտի ու հայի պատմութեան մասին։ Իր իսկ խօսքերով գիրքը նախեւառաջ պէտք է ընկալել որպէս տարեգրութիւն մեր անցած ճանապարհի. «Այսօր՝ այս խառնակ ժամանակներում, երբ մեծ է արկածախնդրութեան գնալու գայթակղութիւնը, պէտք է յիշել մեր հերոսներին, նրանք հերոսացրել են մեր ժամանակը, եւ մենք պարտաւորութիւն ունենք նրանց մասին խօսելու»։ Էտուարտ Պողոսեանը հաւաքական գոյական է, որովհետեւ արցախեան յաղթամարտն՝ ինքը հերոսապատում է՝ առանձին ճակատագրերի, բայց ազատագրական պայքարի ընդհանուր առաքելութեան համատեսքստում։ Պոէմի հերոսն Էտուարտն է, բայց պոէմը Էտուարտի մասին չէ, որովհետեւ չափածոյ շարադրանքի, ասելիքի, բառակերպումների ակունքում եղերական օրերի ու յաղթաբեր դիպուածների ներդաշնակութիւն է։ Պոէմը գրական յուշարձան է նահատակ ու հերոսաջանք մարտիկներին, որոնց կերտել են մեր յաղթանակն ու պատմութիւնը։

Ժամանակի եւ տարածութեան փիլիսոփայական եւ արժէքաբանական ընկալումները խորթ չեն հային. հայը ժամանակի մէջ մշտապէս խտացրել է լեռնացած վիշտն ու ցաւագին յիշողութիւնները, բայց եւ այդ նոյն ժամանակի ծիրում կարողացել է վերյուշային դրուագները շաղախել գարնաներգով, յոյսի ու լոյսի ծիածաններ է վառել՝ իր սրտաչափ ու քարատաճար երկրի զաւակին որպէս զօրաւոր ներարկում հրամցնելով յաղթութեան հպարտանքը։

Ահա պարպուած ցասման ու նաեւ ազգային ոգեկոչման եւս մէկ օրինակ նորօրեայ գրականութեան մէջ։

1996 թ. տասնհինգամեայ Արա Ալոյեանը՝ Վարդենիսի իրենց ցուրտ գիւղի ցուրտ սենեակում մի մեծ մոմ է ունեցել՝ Էտուարտ Պողոսեան՝ Մգո, անուն-ազգանունով։ Վարդենիսցի Մգոն զոհուել է Արցախեան պատերազմում՝ հերոսի մահով, որ ոչ միայն հայրենիքն ազատ լինի, այլեւ Արայենց սերունդը ասք ու հերոս ունենայ ոչ միայն այդ՝ պատերազմի-անկախացման դառն ու դժուարին, այլեւ յետագայ «հոգու սովի» այս օրերին, որը առաւօտից երեկոյ հակահերոսներ է ծնում։ Այն օրերին Վարդենիսի վրայ ծաւալուող Մգոյի անմահութիւնը, «երդիկների» վրայ շրջող, երկինք փնտրող Արայի համար նախ մեծ ցաւ, ապա գիր է դառել ու նա հոգեթաթախ գրչով վրձնել է պոէմ՝ ձօնուած Արցախեան գոյապայքարի վարդենիսցի հերոսամարտիկին եւ այն հերոսներին, ովքեր ազգային պայքարի զոհասեղանին դրեցին իրենց կեանքն ու երիտասարդութիւնը՝ յանուն պարտքի ու մխիթարութեան՝ իր սերնդի ու Մգոյի մօր համար։

Գրայղացումից 17 տարի անց, կամ ինչպէս հեղինակը՝ Արա Ալոյեանն է պատկերաւորութեամբ գրում՝ «մէկ զինուորի տարիք յետոյ», պոէմն ընթերցողին հասանելի է դարձել գրքի տեսքով, որն անկեղծօրէն վեր է լուծում յաղթանակների դժուարութիւնները, ցոյց է տալիս մարտնչող հայի իրական կերպարն ու պատերազմի սարսափելի դժուարութիւնները։

Գեղարուեստական մեծարժէք այս կոթողը, որ անհատի հերոսական պատմութիւն, օրագրութիւն չէ սոսկ, այլ համազգային, համամարդկային ճիչ է ու նաեւ կոչ, բաղկացած է հինգ մասերից՝ Մեղեդիներից՝ Նախակորդ, Մեղեդի ցասման, Մեղեդի ճանապարհի ու յիշողութեան, Մեղեդի զարթօնքի, Մեղեդի ցաւի, Մեղեդի հաւատի ու հերոսապատումի, եւ հնչում է որպէս մեղեդահիւս մի պատարագ, ուր ոճային ձեւերն ու

ռիթմերը տարտղնուած են, որ փոփոխւում են երբեմն ներդաշնակ, երբեմն անսպասելի, որպէս «մատնութիւն» նոր գիր անողի, սակայն այդ «մեղեդիները» ազնիւ են նոյնքան, որքան Մգոյի զոհը հայրենիքի սեղանին ու դրա ընկալումը տասնհիգամեայ պատանու կողմից.

Յոյսը սրբավայր
ուխտի է գնում
Բոբիկ ոտքերով,
Յոյսը որբուկ է
դէմքով անկուայ:

Գրական սաղմերով գրականութեան խորքից ծնուած լինելով՝ «Համանուագ ցաւի եւ յարութեան» վերտառութեամբ պոէմը թաթախուն է չարենցեան, սեւակեան, դաւթեանական էլեգիայի շնչով։

Գնում եմ դանդաղ ճերմակը դէպի,
Դէպ յիշողութիւն՝ Մատեան եռագիր:

Շուտով ասքին խառնւում է նաեւ Թումանեանի ստուերը։ Այդ տարիքում, այդ հերոսացման մէջ առանց նրա հնարաւոր չէր.

Ծխում էր անդուլ, ծխում էր Մգոն,
Յիշողութիւնն էր խնկարկում ցաւից,
Մերթ փակւում էին աչքերը մեգով,
Մերթ վեր էր թռչում մօր կանչող ձայնից:

Ալոյեանը, ինչպէս տեսնում ենք, տիրապետելով գրողական բարձրագոյն տաղանդի, կարողանում է սնուել գրականութեան ակունքներից՝ համադրելով ու հակադրելով պատերազմական դաշտն ու գեղարուեստի դաշտը. զինապայթիւնին զուգորդւում է բառապայթիւնը, սովաբեր պատերազմին՝ բառասովը, որով ակամայ պատւում է ընթերցողը...

Աստիճանականութեամբ շեշտադրուած խօսուն Մեղեդիները գունային բացառիկ խտութեամբ պատկերում են Մգոյի դրաման, պատշաճ մանրամասնութեամբ նկարագրւում է հերոս-մարտիկի կենսաճանապարհը, յիշողութեան պարոյրում ուրուագրծւում է Մգոյի փոքրիկ եղերքը, այդ եղերքում իւրաքանչիւր աչքաթարթում շունչ առնող ապրելու եւ արարելու հսկայ տենչը, ծննդավայրի երազային երանգներին քիչ-քիչ հակադրւում է պատերազմական գունասպառ վրձինը՝ թաթախուած հային անխզելիօրէն կապուած բեկուն ճակատագրով ու անբեկանելի թախծուն խոհերով.

Յիսուսամորուք տղաներ: Հառաչ:
Սատանան կրկին ձեռք է երկարել.
– Յիսուսին ի խաչ...

Տասնհինգամեայ տղային տարիքապէս ոչ համապատասխան մտային խորութեամբ ու զգայական բազմաշերտութեամբ հեղինակը երկնում է խտածոյ մի ստեղծագործութիւն, որը դառնութեամբ մրուրուած ահազարհուր օրերի վշտաձայն ճիչն է, արդարութեան վէճն ու հայոց ակնավառ երիտասարդների մշտավառ հոգու յաղթաձայնը.

... եւ քայլում էին՝ մահն աչքերի մէջ,

Եւ թիկունքին՝ խաչ, մայրական աղօթք,
Եւ հոգում կռիւ, արդարութեան վէճ՝
Քարտէզագրուած սուրբ Ղարաբաղով...

Սեւ ճակատագրի ու ճերմակ լեռների խորքից յառնում է մեր առջեւ հերոսը, որ կերպար չէ, գաղափարատիպ է՝ լցուած ահագնացող ցասմամբ, մաքառումով, հաւատով արթուն եւ արիւնագրուող մեծ յաղթանակով։

Գեղարուեստական իւրօրինակ լուծումների կիրառմամբ, խորքային ու խօսքային պատկերների համադրմամբ բառակերպւում է չվերջակէտուող ցաւը, տողահիւսում անլոյս իրականութիւնը, ապացուցւում լուսաւորի սպասման ճշմարտացիութիւնը, զարթօնքը, յանուն որի վառուեց հերոսների հոգեվարքի ջահը, յանուն որի ցայսօր մխում է արահետի վերջում բոցկլտացող այն խարոյկը, որ կարօտ է կոչւում՝ վիրաւոր կարօտ, մայրական կարօտ...

Կարօտակնիք տողերն էլ, սակայն, թանաքալաց չեն, բառաւորուած լռութիւն են, լացածիծաղ ձայն, զի «հերոսի ԿԵԱՆՔԸ մահով չչափել, զի յիշողութեան թոնրի մէջ դառնում են նրանք, սուրբ նշխար կամ լաւաշ ծաղիկ», դառնում են յաւերժ լուսաւորող կանթեղն այն, որ շողեր է գցում արմատներիդ՝ վերահաստատելով անաղարտ սէրը կեանքի ու աշխարհի նկատմամբ...

Ուրեմն մեռն է քո մահն ու կեանքն էլ։
Մենք էլ ենք մի օր հողի փոխուելու,
Մենք էլ ենք մի օր շողի փոխուելու։

Մնում է ասել, որ պոէմն ու հերոսացումն այս, որ տպագրուել է 5000 օրինակով՝ որպէս հոգեհաց, հեղինակը շարունակում է բաժանել բոլորին նշխարք առ նշխարք՝ Արցախ, Սփիւռք, հայոց դպրոցներ ու բանակի զինուորների, որ չմեռնի ասքը հայոց զինուորի, որ յուշը նրա վառ կեանքի անվերջ վերապրուի՝ արդէն գրի ճաշակմամբ։ Համահայկական այս նախագծի նպատակն է ոգեկոչել Արցախեան գոյամարտի եւ 44-օրեայ պատերազմի հերոսներին, նորոգել յատկապէս նոր սերնդի ռազմահայրենասիրական ու յաղթական ոգին...

Այսպիսով՝ Արա Ալոյեանի «Համանուագ ցաւի եւ յարութեան» պոէմը համայնապարփակ հերոսապատում է, որն իր բովանդակային շերտում աւելի համընդգրկուն է եւ արտացոլում է ամբողջ հայ ժողովրդի պայքարը իր հոգեկերտուածքի, էութեան եւ ազգային արժանապատուութեան պահպանման համար։ Պոէմում առկայ են ժանրային անհամահունչութիւններ, գրողական ազդեցութիւններ, մտային ու գրական «անչափահասութիւն»։ Հերոսն էտուարտն է, բայց պոէմը էտուարտի մասին չէ, որովհետեւ չափածոյ շարադրանքի, ասելիքի, բառակերպումների ակունքում եղերական օրերի ու յաղթաբեր դիպուածների ներդաշնակութիւն է։

Պոէմը գրական յուշարձան է նահատակ ու հերոսաջանք մարտիկներին, որոնց կերտել են մեր յաղթանակն ու պատմութիւնը։ Գրքոյկի առաջին իսկ տողերն ընթերցելիս խուլ զայրոյթն սկսում է եռալ հոգուդ խորքում, ակամայ զգում ես արեանդ հոսքը երակներումդ, մտքիդ սովը բառաքաղց է հայտարարում... պատում ես պարպուած ցասման ու տիեզերաչափ հպարտութեան միջեւ առկախ մնացած մի զգացողութեամ, որ, ըստ էութեան, տիեզերական խորհրդով յաւերժ լուսաւորող կանթեղի նման շողեր է գցում արմատներիդ՝ վերահաստատելով հայոց անաղարտ սէրը կեանքի ու աշխար-

հի նկատմամբ։

Գիրքը գրուած է մէկ շնչով, որում հեղինակի հոգեթաթախ գրիչը բառակերպել է անբառելին, ոգի, պայթիւն ու պայքար է ներարկել իւրաքանչիւր բառի ու տողի մէջ, որից սրտափշուր է լինում ընթերցողը։ Սա խօսում է այն մասին, որ պատերազմը հասունացրեց այն սերնդին, որն առաջին սիրոյ փոխարէն արտաբերում էր վառօդ, ռազմադաշտ բառերը։ Սա բացիկ է ուղղուած իւրաքանչիւր հայի։

ՆԵՐՍԵՀ ՎԱՐԴԱՊԵՏ ԱԼՈՅԵԱՆ

ՄԵԾԵՐԸ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ ՄԱՍԻՆ

Մարդուս մարմնոյն սքանչել կառուցուածքը միայն բաւական է խելացի քննողի մը ճանչցնելու, թէ սա արարածը մէկ ալ արարածոց հաւասար չէ, հապա գերագոյն բան մը պիտի ըլլայ գերագոյն վախճանի մը համար։ Զգայարանաց փափկութիւնն ու կատարելութիւնը, արտաքին վսեմ շնորհալի տեսքը, ամենակերպ շարժմանց յաջողութիւնը եւ... այն աչքերն ու երեսը, որ սրտի հայելին են, ասոնք ամէնն ալ մեզի կը վկայեն, թէ մենք բոլոր կենդանական աշխարհէն շատ վեր ենք։ Իսկ թէ որ քիչ մը մարդուս ներսն ալ մտնենք, պէտք է որ կանչենք Գրիգոր Աստուածաբանի հետ, թէ մարդս է համառօտութիւն տիեզերաց կամ գլուխգործոց Աստուծոյ։

ԴԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆ

Զգուշացիր բացառապէս գիտութեամբ զբաղուելէ, ինչպէս կ'ընէիր մինչ այդ։ Ի հարկէ, սորվիր, հետազօտէ երկրայինը. այդ է գիտութեամբ զբաղուողին պարտականութիւնը, բայց յաւիտենական լոյսի ներքոյ քննէ տեսանելի աշխարհը։ Մէկ ձեռքով հետազօտէ բնութիւնը, իսկ միւսով, ինչպէս մանկութեան օրերուն կը բռնէիր հօրդ հագուստէն, այնպէս ալ հիմա բռնէ Աստուծոյ շուրջառի ծայրէն։

ԱՆԴՐԷ ՄԱՐԻ ԱՄՊԵՐ

Այս սրբազանագոյն Գիրքին մէջ է բոլոր գաղտնիքներու գաղտնիքը։ Օ՜, մահկանացուներու մէջ երջանիկ են անոնք, որոնց Աստուած շնորհած է այս Գիրքին խօսքերը լսելու, կարդալու, աղօթքով արտաբերելու եւ երկիւղածութեամբ ընկալելու ողորմութիւնը։ Երջանիկ են անոնք, որոնք ի վիճակի են բանալ Աստուածաշունչի դռները եւ համարձակ ընթանալ անոր ճանապարհներով։ Բայց աւելի լաւ կ'ըլլար, որ երբեք ծնած չըլլային այն մարդիկ, որոնք կը կարդան միայն կասկածի տակ առնելու եւ արհամարհելու նպատակով։

ՃՈՐՃ ԳՈՐԴՈՆ ՊԱՅՐԸՆ